«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ ԸՆՏԱՆԵԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ, ԿՈՆՖԼԻԿՏՆԵՐ

Առարկան՝ ԴԱՄՎԱՐ

Հետազոտող ուսուցիչ՝ ՄԱՐԻՆԵ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Ուսումնական հաստատություն՝ <<ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԾԱԹԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ>> ՊՈԱԿ

Երևան 2023

Բովանդակություն

Ներածություն 3
§1. Ընտանիքի հոգեբանություն և կոնֆլիկտներ 5
1.1 Ընտանիքի հոգեբանության նկարագիրը 5
1.2 Ընտանեկան կոնֆլիկտների նկարագիրը 7
§2.Ընտանեկան կոնֆլիկտների տեսակները և դրանց ազդեցությունը երեխայի անձի ձևավորման վրա 13
2.1 Միջանձնային հարաբերությունները ընտանիքում 13
2.2 Ինչ ազդեցություն է ունենում ընտանեկան կոնֆլիկտները երեխայի հոգեբանության և ուսման որակի վրա 17
Եզրակացություն 19
Գրականության ցանկ 20

Ներածություն

Ընտանիքը ամուսնության կամ ազգակցության վրա հիմնված՝ մարդկանց փոքր խումբ է, որի անդամները միմյանց հետ կապված են կենցաղի ընդհանրությամբ, փոխադարձ օգնությամբ և բարոյական պատասխանատվությամբ։ Որպես սոցիալական երևույթ, ընտանիքը փոխվում է հասարակության տնտեսական հիմքի զարգացմանը համապատասխան՝ պահպանելով հարաբերական ինքնուրույնություն։

Այս աշխատանքի արդիականությունը պայմանավորված է ընտանեկան կոնֆլիկտների տարածված լինելու փաստով և հիմնական խնդիրն է՝ ծնողների գիտակցական մակարդակը դարձնել այն մակարդակի,որ կոնֆլիկտների արդյունքում երեխաները չտուժեն և որ թույլ չտան երեխան ականատես լինի ընտանեկան կոնֆլիկտներին:Աշխատանքի նպատակն է ուսումնասիրել ընտանեկան կոնֆլիկտների տեսակները,բացահայտել բոլոր հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք կարող են ունենալ երեխայի կյանքի բնականոն գործընթացի վրա:

Ընտանիքը պետության հոգատարությամբ շրջապատված հասարակական մի բջիջ է, որը զուգակցում է մարդկանց անձնական շահերը և նպաստում հասարակարգի և պետության կայունությանը: Ներկա ժամանակաշրջանում պետությունը շահագրգռված է ստեղծել ամուր, համերաշխ ընտանիք, քանի որ ընտանիքի կայունությունը նպաստում է հասարակարգի և պետության կայունացմանը:

Ընտանիքը միայն ամուսնական, ազգակցական կապերով, ընդհանուր հոգևոր և նյութական շահերով կապված անձանց միությունն է: Ընտանիքը հասարակության մի մասնիկն է:

Ընտանիքի կարևորագույն մասերից է օրենսդրությունը: Օրենսդրության մեջ գոյություն ունի ընտանեկան իրավունք, որտեղ օրենքը որոշում է ընտանիքում կնոջ, ամուսնու, երեխաների և ծնողների դերը ընտանիքում, իրավունքներն ու պարտականությունները: Ընտանեկան օրենսգրքով ճանաչվում է միայն քաղաքացիական կացության ակտերի գրանցման պետական մարմիններում արձանագրված է ամուսնություն, այսինքն եկեղեցական ամուսնությանը պետության կոմից չեն ճանաչվում:

Ընտանիքը որպես հասարակական կարևորագույն սոցիալական ինստիտուտ տարբերվում է սովորական սոցիալական խմբերից: Ընտանիքում գոյություն ունեն հոր, մոր և զավակների կարգավիճակներ, դերեր, իրավունքներ ու պարտականություններ: Ընտանիքի կայացման համար մեծ նշանակություն ունի երիտասարդ սերնդի նախապատրաստումը ամուսնական կյանքին:

Ամուսնության ամրության և ընտանիքի արդյունավետ գործառման ընթացքում անհատական պահանջմունքների դերի կարևորությունը ստիպում է ընտանիքի հոգեբանական հետազոտության ընթացքում մշտապես ուշադրության կենտրոնում պահել ընտանիքի անդամների պահանջմունքների խնդիրը: Շատ դեպքերում, խնդրի արդյունավետ լուծման համար ամուսնական կամ ընտանեկան պահանջմունքները դասակարգվում են:

Ընտանեկան միջավայրի ազդեցության միջոց է ընտանիքի անդամների խոսքը: Ընտանիքում թե կրտսեր, թե ավագ անդամները հաղորդում են իրենց տպավորությունները տեսածի և լսածի վերաբերյալ, պատմում իրենց աշխատանքային գործունեության և շրջապատի կյանքի կարևոր դեպքերի մասին :Խոսքի օգնությամբ քննարկվում են բազմազան հարցեր, ծնողները երեխաներին տալիս են խորհուրդ, բացատրություն:

§1.Ընտանիքի հոգեբանություն և կոնֆլիկտներ

1.1 Ընտանեկան հոգեբանության նկարագիրը

Ընտանիքի հոգեբանությունը՝ որպես հոգեբանության մի առանձին ճյուղ, ուսումնասիրվել է բազմաթիվ հոգեբանների կողմից: Ինչպես հայտնի է ժամանակակից գրականությունից ընտանեկան կյանքին նախապատրաստելու կարևոր ուղղություններից մեկն այն է, որ աղջիկներն ու պատանիները հասկանան, որ ամուսնությունը ոչ թե ընտանեկան երջանկությունն ընտրելու ավարտն է, այլ նրա սկիզբը: Յուրաքանչյուր երիտասարդ մինչ ամուսնանալը պետք է տեղեկացվի, թե ինչին կարող է նա բախվել ամուսնական կյանքի ընթացքում: Եվ որպեսզի ընտանիքը լինի բարեհաջող, ապա բոլոր պատկերացումները պետք է լինեն համատեղ, որպեսզի ամուսիններից յուրաքանչյուրի վարքը չհակադրվի մյուսի պատկերացումներին: Զուգընկերների դերերը և՝ կնոջից, և՝ ամուսնուց պահանջում են ընտանիքում տնտեսումը, երեխաների հանդեպ պատասխանատվությունը: Հասարակության համար կարևոր է ոչ միայն ամուսնության կայունության փաստը, այլև ներընտանեկան հարաբերությունների որակը, դրանց խանգարումների հետևանքները:

Շատ էական է համարվում ընտանիքում անդամների միջև աֆեկտիվկապերը: Միջանձնային հարաբերությունները սուբյեկտների փոխադարձ պատրաստակամությունն է որոշակի փոխգործողությունների տիպին: Հուզական կայունությունը պայմանավորված է ամուսինների զգացմունքներով (սեր, համակրանք, հարգանք): Որպես կանոն, երեխաները ծնողների գործերը և առօրյան դարձնում են ավելի հաճելի: Ծնողների վերաբերմունքն իրենց երեխաների նկատմամբ շատ դեպքերում տարբեր է: Այժմ երեխաներով շատ ընտանիքներում կարելի է տեսնել, որ մեծերին հարգում են, իսկ փոքր երեխաներին երես են տալիս: Միջին տարիքի երեխաներին, որոնց մոռանում են, հիմնականում ավելի լավ մարդիկ են դառնում:

Ընտանիքը կարելի է բնութագրել որպես պատմականորեն կոնկրետ հարաբերությունների համակարգ ամուսինների միջև, որպես փոքր սոցիալական խումբ, որի անդամները կապված են ամուսնական կամ ազգակցական հարաբերություններով, կենցաղի ընդհանրությամբ և փոխադարձ բարոյական

պատասխանատվությամբ, և որի սոցիալական անհրաժեշտությունը պայմանավորված է հասարակության բնակչության ֆիզիկական և հոգևոր վերարտադրության պահանջմունքով: Դեռևս Արիստոտելն է նշել. Ընտանիքը հասարակության բջիջն է: Այսինքն հասարակությունը, հետևաբար նաև պետությունը, կարող են առողջ լինել, եթե առողջ և կայուն է ընտանիքը: Իսկ ե±րբ է ընտանիքը առողջ: Ընտանիքի հոգեբանության մասնագետները գտնում են, որ հոգեբանորեն առողջ է այն ընտանիքը, որում հուզական փոխհարաբերությունները ձևավորված ու կայուն են թե՞ ամուսինների, թե՞ ծնողների ու երեխաների միջև: Այսինքն առողջ ընտանիքում տիրում է դրական բարոյա-հոգեբանական մթնոլորտ:

Ամուսնական կյանքի հաջողության վրա ազդում է ամուսինների համատեղելիությունը բոլոր ոլորտներում, երբ մարդիկ ոչ միայն համատեղվում են, այլև լրացնում մեկը մյուսին: Սոցիալ-հոգեբանական համատեղելիությունը ենթադրում է որոշակի ընդհանրություն, որը կարելի է դիտարկել երեք մակարդակներում.

1. Բարձրագույն և առավել բարձր մակարդակը արժեքակողմնորոշիչ միասնությունն է կենսական արժեքների, ձգտումների, իդեալների, հետաքրքրությունների, համոզմունքների միասնությունը, ինչպես նաև աշխարհայացքային միասնությունը:

2. Ֆունկցիոնալ-դերային սպասումների համաձայնեցվածությունը մարդկանց իրենց դերերի և ֆունկցիաների մասին պատկերացումների համաձայնեցվածությունն էտվյալ միության մեջ:

3. Մարդկանց անհատական-հոգեբանական բնութագրերի համատեղելիությունը:

Հետաքրքիր է, որ բարեհաջող զույգերը, որոնք ունեն կայուն և առավելագույնս համատեղելի հարաբերություններ, տարբերվում են հակառակ խառնվածքով. դյուրագրգիռ խոլերիկը և հանգիստ ֆլեգմատիկը, ինչպես նաև մելանխոլիկը և կենսուրախ սանգվինիկը կարծես լրացնում են իրար: Եվ հակառակը երկու խոլերիկներից կազմված ընտանիքին կարող է սպասվել բարձր կոնֆլիկտայնություն ամուսինների պոռթկունության և անզսպության պատճառով: Պարզվում է առավել ունիվերսալ զուգընկերներ են համարվում ֆլեգմատիկները, քանի որ նրանք հարմարվում են խառնվածքի ցանկացած տիպի հետ, բացի սեփականից: Չկա այնպիսի ամուսնական զույգ, որտեղ ամուսինները լիովին նման լինեն միմյանց: Սակայն պետք է նկատի ունենալ, որ

համատեղ կյանքն աստիճանաբար հարթում է կտրուկ տարբերությունները ամուսինների հետաքրքրությունների, նախասիրությունների, հայացքների միջև, և առաջանում է գնահատականների ու վերաբերմունքի ընդհանրություն: Եթե տարբերությունները շատ են, պետք է հաբերել ու նաև ձգտել ավելի լավ հասկանալ ամուսնուն: Երբ ամուսիններն իրար լավ են հասկանում, նրանց բնավորության կամ խառնվածքի, վարքագծի խութերն ուժեղ չեն բախվում և խանգարում միմյանց: Երբ ամուսիններն անգամ իդեալական միասնության դեպքում հանդուրժում են միմյանց ինքնությունն ու անկախությունը, ապա զբաղմունքների տարբերությունը, բնավորությունների զանազանությունը չեն կարող տնական անջատման շարժառիթ ծառայել:

Հաճախ զուգընկերները դառնում են ավելի պակաս ուշադիր միմյանց նկատմամբ և ավելի էգոիստ, քան առաջ: Սառած զգացմունքները կարող են բազմաթիվ ընտանեկան կոնֆլիկտներ ստեղծել, ուստի սերն ամուսնության մեջ մշտապես պահպանել: Միաժամանակ պետք է հասկանալ և գիտակցել, որ մինչամուսնական, պատանեկան սերը և ամուսնական սերը նույնը չեն: Ներդաշնակ ընտանիքներում մարդիկ միշտ լսում են միմյանց հույզերն ու պահանջմունքները, նրանք բարի են, քնքուշ, հավատարիմ ու համբերատար: Նրանց հարաբերությունները հիմնված են հարգանքի, փոխադարձ օգնության, ներողամտության վրա: Երջանիկ ամուսինների կյանքում մշտապես տեղի է գտնվում ուշադրության նշանների համար, որոնք արտահայտում են ջերմություն և հոգատարություն միմյանց նկատմամբ:

1.2 Ընտանեկան կոնֆլիկտների նկարագիրը

Բոլոր ժամանակներում էլ ընտանիքում տարբեր պատճառներով ծագել են կոնֆլիկտներ: Հաճախակի կոնֆլիկտներն ազդում են ընտանիքի հոգեբանական մթնոլորտի վրա, քայքայում հարաբերությունները, ընտանիքի անդամների մեջ առաջացնում սթրես, լարվածություն, տհաճ հոգեվիճակներ:

Շատ կարևոր է ուսումնասիրել ընտանեկան հարաբերություններում տեղի ունեցող տեղաշարժերը, ընտանեկան կոնֆլիկտների առաջացման պատճառները և դրանց ազդեցությունը երեխայի անձի ներդաշնակ ձևավորման վրա: Գոյություն ունի կոնֆլիկտ հասկացության մի քանի սահմանում: Բ. Մ. Ռեբուսը կոնֆլիկտը բնութագրում է որպես մարդկանց գիտակցության մեջ միմյանց հանդեպ հակադարձ ուղղված և անհամատեղելի միտումների բախում՝ կապված բացասական սուր հուզական ապրումների հետ»:

Ըստ Ա. Վ. Սերգեյչուկի՝ կոնֆլիկտը անհատների անհամատեղելի նպատակների, հետաքրքրությունների, դիրքորոշումների, կարծիքների, հայացքների բախում է»:

Ըստ վիճակագրական տվյալների ընտանեկան կոնֆլիկտների հիմնական պատճառը հաղորդակցման կուլտուրայի, փոխադարձ վստահության, քաղաքավարության, ուշադրության, բարյացակամության, նրբազգացության բացակայությունն է:

Իրականում կոնֆլիկտների պատճառ կարող են հանդիսանալ հոգեբանական անհամատեղելիությունը, սեռական խնդիրները, միմյանց մտադրությունները չհասկանալը, վարքի սխալ մեկնաբանությունները, բարոյականության վերաբերյալ տարբեր մոտեցումները, պարտքի և պատասխանատվության զգացումի բացակայությունը և այլն:

Ընտանեկան կոնֆլիկտների հիմքում ընկած է ամուսինների նպատակների և հետաքրքրությունների օբյեկտիվ տարբերությունները, որը հարաբերություններում ընդունվում է որպես հակադրություն:

Սոցիալ-հոգեբանական հետազոտությունները հնարավորություն են տալիս առանձնացնել ընտանեկան կյանքում առաջացող կոնֆլիկտների 4 տեսակ.

1. <u>Ներանձնային</u>-պետք է նշել, որ այն մարդը, որն ունի ներքին կոնֆլիկտներ, հաճախ սխալ է գնահատում շրջապատի մարդկանց և տեղի ունեցող իրադարձությունը:

Արդյունքում տեղի է ունենում հոգեբանական ճնշում և հնարավոր է ներանձնային կոնֆլիկտը վերափոխվի միջանձնային կոնֆլիկտի։

2. Միջանձնային-կոնֆլիկտը ծագում է 2 կամ ավելի մարդկանց միջև։ Միջանձնային կոնֆլիկտն առաջանում է մարդկանց համատեղ աշխատանքի ժամանակ և ծագում հակադրությունների լուծման ժամանակ։ Նման կոնֆլիկտի լուծումը կախված է մարդկանց զարգացման մակարդակից։

3. Անհատական-խմբային կոնֆլիկտը առաջանում է այն ժամանակ, երբ անհատաի նպատակը, վարքը չի համապատսխանում խմբի նորմերին։

4. Միջխմբային կոնֆլիկտ-այս դեպքում կարող է տեղի ունենալ բախում տարբեր խմբերի նպատակների, վարքի միջև։ Կոնֆլիկտային գործունեության հիրմքում ընկած են՝

ա)գործունեության բնույթը (հարձակվողական, պաշտպանողական, չեզոք)

բ) ակտիվության կոնֆլիկտներ (սիրո կորուստ, կապվածություն, կոպտություն, խանդը, կյանքին տարբեր հայացքներով նայելը)

գ) նեքին կոնֆլիկտ (դավաճանություն, մեկ այլ մարդու հանդեպ նոր զգացում)։ Ընտանեկան կյանքը մի ամբողջ գիտություն է, որը շատ բարդ է և անընդհատ զարգացող, քանի որ երկու ճակատագրեր միացել են և դարձել ընդհանուր երկու աշխարհներ։ Անհրաժեշտ է ապրել ընդհանուր հոգսերով, հաջողություններով։

Ներընտանեկան անբարենպաստ փոխհարաբերությունների առաջացման հիմնական և ավելի հաճախ հանդիպող պատճառներից մեկը կոնֆլիկտներն են ընտանիքի անդամների միջև։ Ընտանիքի անդամների միջև միշտ առկա է պայքար հանուն իշխանության, հանուն որոշումներ կայացնելու իրավունքի։ Օրինակ, ծնողի և երեխայի միջև որոշակի պայքար է առաջանում, թե տարբեր խնդիրների շուրջ ով է վճիռ կայացնելու։ Միջամուսնական կոնֆլիկտների առաջացումն ավելի հավանական է դառնում հետևյալ պայմանների առկայության դեպքում կամ հետևյալ պատճառներով.

1. սեփական ես-ի նշանակալիության, կարևորության պահանջմունքի, չբավարարվածության, ամուսիններից մեկի սոցիալական դիրքի ցածրացում,

2. դրական հույզերի, պահանջմունքի, չբավարարվածության, քնքշանքի հասկանալու և փոխըմբռնման բացակայության և այլն,

3. ցածր կրթամակարդակ

4. աշխատանքի բացակայություն և ֆինանսական դժվարություններ

5. կախվածություն ծնողների ընտանիքներից:

Ամուսնական կոնֆլիկտները հաճախ առաջանում են զույգերի ֆիզիկական և հոգեբանական անհամատեղելիության պատճառով: Հոգեբանական համատեղել-ությունը պայմանավորված է ամուսինների խառնվածքի տիպով և բնավորության գծերով: Որքան ամուսինները նման են իրար բնավորությամբ և խառնվածքով, այնքան ավելի շատ են նյարդայնացնում և հոգնեցնում միմյանց: Ներդաշնակ զույգ կարող են լինել օրինակ սանգվինիկ ամուսինն ու մելանխոլիկ կինը:

Ֆիզիկական համատեղելիությունը պայմանավորված է կնոջ և տղամարդու օրգանիզմի կառուցվածքով, սեռական օրգանների առանձնահատկություններով, որոնք էական նշանակություն ունեն սեռական կյանքում: Արդեն ապացուցված է, որ սեռական անբավարարվածությունը, ինտիմ կյանքում առկա խնդիրներն առաջացնում են սառնություն ու անտարբերություն կին-տղամարդ հարաբերություններում:

Ընտանիք կազմելիս հարկավոր է հաշվի առնել նաև այն, որ տղամարդկանց օրգանիզմի վերջնական ձևավորումը տեղի է ունենում 25 տարեկանում, իսկ կանանց օրգանիզմի վերջնական ձևավորումը՝ 18-20 տարեկանում: Բացի այդ, տղամարդկանց սեռական հակումն ավելի երկար է պահպանվում, քան կանանց: Ուստի, կենսաբանական տեսանկյունից ցանկալի է, որ զույգ կազմելիս տղամարդը լինի տարիքով ավելի մեծ, որպեսզի սեռական կյանքում լինի ներդաշնակություն:

Ամուսնական կոնֆլիկտների առաջացման մյուս հաճախակի հանդիպող պատճառը տղամարդու՝ որպես լոկ ֆինանսի աղբյուր դիտարկվելն է: Այն միտքը, որ ընտանիքի անդամները ֆինանսապես տղամարդուց կախվածության մեջ են, սկսում է ճնշել և բացասաբար անդրադառնալ նրա հոգեկանի վրա: Արդյունքում թուլանում է նրա կապը նախ՝ կնոջ, ապա՝ երեխաների հետ:

Գոյություն ունեն նաև այնպիսի ընտանիքներ, որտեղ բավականին բարձր է կոնֆլիկտայնության աստիճանը, խաթարված է ընտանիքի անդորրը, միջանձնային հարաբերություններում առկա է լարվածություն: Դրանք են.

- նևրոտիկ ընտանիքներ, որտեղ զույգի մոտ նկատվում են տագնապայնության բարձր մակարդակ, քնի խանգարում, ագրեսիվություն,

- ճգնաժամային ընտանիքներ, որտեղ ամուսինները թշնամաբար են տրամադրված միմյանց նկատմամբ, հաշվի չեն առնում միմյանց հետաքրքրութ-յունները, հակված չեն փոխզիջման,

- պրոբլեմային ընտանիքներ, որտեղ առկա խնդիրների, կյանքի ծանր պայմանների արդյունքում ընտանիքը հայտնվում է անկայուն վիճակում:

Ընտանեկան վեճերն իրենց բնույթով կարող են լինել պերմանենտ (անընդհատ): Նման ընտանիքները հիմնականում լինում են քրեածին, կոնֆլիկտածին, ամբարենպաստ ընտանքիներ:

Վեճերի ժամանակ գլխուղեղի կեղևում առաջանում է օպտիմալ գրգռման օջախ, որը կարող է ընդգրկել ահռելի ու ավելի կետերի տարածք:

Այս դեպքում մարդը կորցնում է ինքնատիրապետումը, դիմացինին լսելու ունակությունը և վեճը վերածվում է կոնֆլիկտի: Ցանկացած վեճի հիմքում ընկած է անհատականության երևույթը, այսինքն անհատականը:

Մարդը աշխատում է հնարավորինս վիրավորելով դիմացինին բարձրացնել "Ես"-ի արժեքը: Կոնֆլիկտի հիմնական պատճառը անձնավորության որևիցե պահանջմունքի չբավարարված լինելն է: Սկսած ֆիզիկական, կենսաբանական,ֆիզիոլոգիականից մինչև հոգևոր պահանջմունքները: Ընտանիքի համար ճգնաժամային շրջաններն են՝

1. Միմյանց հարմարվելու փուլ՝ամուսնական կյանքի առաջի տարին է, երբ ձեվավորվում է նոր որակի հարաբերություններ, նոր հոգևոր արժեքներ:

2. Երեխա ունենալու փուլ՝ երեխաների ծնունդը բարդացնում է ամուսինների մասնագիտական աճի հնարավորությունները, քիչ ժամանակ է տրամադրվում անձնական գրավիչ գործունեությանը (հոբբի), կնոջ հոգնածության պատճառով, կապված երեխայի խնամքի հետ, ժամանակավոր սեռական ակտիվության նվազումը:

3. Բախման փուլ՝ երեխաների դաստիրակության վերաբերյալ ամուսինների և նրանց ծնողների հայացքների, տեսակետների բախումը:

4. Միապաղաղության, կամ միջին ամուսնական տարիքի փուլ՝ այս շրջանը երբեմն անվանում են նաև զգացմունքների հագեցվածության փուլ, կամ քաղցի շրջան:

5. Իվոլուցիոն, կամ միայնակության զգացման փուլ: Այս շրջանը համարվում է18-ից 24տարի համատեղ կյանքից հետո, որը հաճախ համընկնում է ինվոլուցիոն շրջանի հետ: Կարող է ձեւավորվել միայնակության զգացում՝ կապված երեխաների հեռանալու հետ: Այս փուլում հսկայական նշանակություն ունեն արտաքին գործոնները՝ նյութական վիճակի վատթարացումը, աշխատանքի անցնելու անհնարինությունը, սեփական բնակարանի բացակայությունը և այլն:

Ընտանեկան անբավարարվածության վիճակն առաջանում է կոնֆլիկտային իրավիճակների արդյունքում, որոնցում դրսեւորվում է տարաձայնություն տվյալ անհատի վերաբերյալ, սպասումների և նրա իրական կյանքի միջև: Կոնֆլիկտից կոնֆլիկտ, կուտակվելով, այսպիսի անբավարարվածությունը արտահայտվում է հուզական պոռթկումներում և հիստերիկ դրսեւորումներում, որոնց հաճախականացումը կարող է լրջորեն խաթարել ընտանիքի ամրությունը:

Ճնշող մեծամասնությամբ, պատճառները, որոնք հանգեցնում են ընտանիքում կոնֆլիկտային իրավիճակի, առաջ են բերվում սոցիալական գործոններով:

Մյուս ակնհայտ պատճառը, այսպես կոչված, «ուղեղի լուսավորումն» է, որը գործում է հատկապես երիտասարդ ընտանիքներում: Երբ համատեղ կյանքի ռոմանտիկ շրջանն ավարտվում է, (միջինը 1-ից 3 տարի հետո) կողակցի թերություններին համակերպվել բոլորը չեն կարողանում: Հաճախ բացահայտում են, որ կիրքը՝ կիրք, բայց ստացած դաստիարակության, կրթության տարբերությունը, չհամընկնող կենսական արժեքները, մասնագիտական կայացածության հարցը և այլ խնդիրներ պարարտ հող են դառնում ներքին չարացածություն համար, ինչը հանգեցնում է բացահայտ կոնֆլիկտների: Ուստի երբ ներքին լարվածությունը գերհասունանում է այն մտքից, որ կողակիցը համատեղ կյանքում ամենևին էլ այնպիսին չէ, ինչպիսին պատկերացնում էիք, սկսկվում են մանր խայթոցները, որոնք սովորաբար արագ վերաճում են լուրջ վիճաբանությունների:

Բացի այդ՝ կյանքի կենցաղային կողմից չես փախչի, իսկ նյութական ապահովությունը, տան պայմաններն ու հարմարավետությունը իսկապես կարևորագույն դեր են խաղում: Դժբախտաբար, ժամանակակից ընտանիքների մեծ մասը չի կարող պնդել,

թե գոհ է նյութական վիճակից: Իսկ երբ ստիպված եք լինում վարձած մի տնից մյուսը տեղափոխվել, վճարել ապառիկ ապրանքների, կարծես, չսպառվող տոկոսները, երբ բնակարանում

20 տարի շարունակ վերանորոգում չի իրականացվել, իսկ խորհրդային տարիներին գնված կահույքն սկսել է քանդվել, վեճ ու կռիվներն անխուսափելի են:

§2.Ընտանեկան կոնֆլիկտների տեսակները և դրանց ազդեցությունը երեխայի անձի ձևավորման վրա

2.1 Միջանձնային հարաբերությունները ընտանիքում

Բոլոր ժամանակներում էլ ընտանիքում տարբեր պատճառներով ծագել են կոնֆլիկտներ: Հաճախակի կոնֆլիկտներն ազդում են ընտանիքի հոգեբանական

մթնոլորտի վրա, քայքայում հարաբերությունները, ընտանիքի անդամների մեջ առաջացնում սթրես, լարվածություն, տհաճ հոգեվիճակներ: Ընտանեկան կոնֆլիկտների արդյունքում առաջին հերթին տուժում են երեխաները, որոնք ունենում են անձնային զարգացման խեղաթյուրումներ և վարքի խանգարումներ: Աշխատանքում նկարագրված են ընտանեկան կոնֆլիկտների տեսակները, դրանց առաջացման պատճառները և դրանց բացասական հետևանքները երեխայի անձի ձևավորման վրա: Երեխայի անձի ձևավորումն առաջին հերթին տեղի է ունենում ընտանիքում, և ընտանեկան մթնոլորտը, հարաբերությունները, դաստիարակությունը վճռորոշ ազդեցություն են ունենում երեխայի ներդաշնակ զարգացման և հոգեկան առողջության վրա:

Ընտանիքում ձևավորվում են երեխայի բնավորությունը, ինքնագիտակցությունը, ինքնագնահատականը, բարոյական պատկերացումները, սոցիալական դիրքորոշումները, երեխան յուրացնում է վարքի կանոնները, տեղի է ունենում անձի սոցիալականացում: Վերջին ժամանակներում ընտանեկան հարաբերություններն էական փոփոխությունների են ենթարկվել: Ավելացել է բջջային՝ ամուսիններից և երեխաներից կազմված ընտանիքների թիվը: Փոխվել են ընտանիքում ամուսինների ֆունկցիաները, նրանց արժեհամակարգը, վերաբերմունքը երեխաների նկատմամբ, դաստիարակության մեթոդները: Շատ կարևոր է ուսումնասիրել ընտանեկան հարաբերություններում տեղի ունեցող տեղաշարժերը, ընտանեկան կոնֆլիկտների առաջացման պատճառները և դրանց ազդեցությունը երեխայի անձի ներդաշնակ ձևավորման վրա: Գոյություն ունի կոնֆլիկտ հասկացության մի քանի սահմանում:

Ըստ վիճակագրական տվյալների ընտանեկան կոնֆլիկտների հիմնական պատճառը հաղորդակցման կուլտուրայի, փոխադարձ վստահության, քաղաքավարության, ուշադրության, բարյացակամության, նրբազգացության բացակայությունն է: Իրականում կոնֆլիկտների պատճառ կարող են հանդիսանալ հոգեբանական անհամատեղելիությունը, սեռական խնդիրները, միմյանց մտադրությունները չհասկանալը, վարքի սխալ մեկնաբանությունները, բարոյականության վերաբերյալ տարբեր մոտեցումները, պարտքի և պատասխանատվության զգացումի բացակայությունը և այլն: Ընտանիքն ամուր է այն ժամանակ, երբ զույգերի միջև ստեղծված են բարիդրացիական հարաբերություններ, երբ ազատ քննարկվում են տարբեր թեմաներ, երբ ամուսիններն ունեն ընդհանուր հետաքրքրություններ,

ընդունակ են ապրումակցման, զիջող են և, ամենակարևորը, երբ ընտանիքի հիմքում սերն է:

Կոնֆլիկտ ամուսնական զույգի միջև

Կին-տղամարդ հարաբերություններում կոնֆլիկտի պատճառ կարող են լինել հոգեբանական անհամատեղելիությունը, զույգերից մեկի ծանր¦ բնավորությունը, դավաճանությունը, աշխարհընկալման և արժեհամակարգի անհամապատասխանությունը, կնոջ անկարողությունը՝ լուծելու կենցաղային հարցերը, ֆինանսական խնդիրները և այլն: Կոնֆլիկտը կարող է պայմանավորված լինել նաև ընտանեկան հարաբերությունների ճգնաժամով: Առաջին ճգնաժամն ի հայտ է գալիս ամուսնության 1-ին տարում, հատկապես երբ ընտանիքում երեխա է ծնվում, երկրորդը՝ ամուսնության 3-7-րդ տարում, երրորդը՝ 17-25-րդ տարում: Ամուսնական կոնֆլիկտները հաճախ առաջանում են զույգերի ֆիզիկական և հոգեբանական անհամատեղելիության պատճառով: Հոգեբանական համատեղելիությունը պայմանավորված է ամուսինների խառնվածքի տիպով և բնավորության գծերով: Որքան ամուսինները նման են իրար բնավորությամբ և խառնվածքով, այնքան ավելի շատ են նյարդայնացնում և հոգնեցնում միմյանց:

Կոնֆլիկտ ծնող–երեխա հարաբերություններում

Ընտանիքում ծնողը կարող է կոնֆլիկտներ ունենալ տարբեր տարիքի երեխաների հետ: Պատճառը ծնողի՝ երեխայի տարիքային և հոգեբանական առանձնահատկությունները չգիտակցելն է, դաստիարակության ձևերին չտիրապետելը, երեխայի մտադրությունները չհասկանալը, նրան մշտապես փոքր և անկարող մարդ համարելը: Մի տարիքային փուլից մյուսին անցումն ուղեկցվում է ճգնաժամով, որը միշտ չէ, որ սահուն է ընթանում: Ճգնաժամը կարող է լարվածություն առաջացնել հարաբերություններում՝ հատկապես երեք տարեկանում և դեռահասության տարիքում:

Ծնողների տեղեկացվածությունը, նրանց հանդուրժողականությունը թույլ չեն տալիս, որ ծնող-երեխա հարաբերություններում նվազի ջերմությունը, անջրպետ առաջանա: Մեծ

թվով կոնֆլիկտներ են առաջանում դեռահասության տարիքում, ինչը պայմանավորված է դեռահասների հոգեբանական, ֆիզիկական և սեռական կյանքում տեղի ունեցող փոփոխություններով: Դեռահասությունն ինքնին համարվում է ճգնաժամային տարիք, և այս տարիքային փուլում առավել կարևոր են ընտանեկան ջերմ հարաբերությունները, փոխադարձ վստահությունը, հարգանքը, փոխըմբռնումը:

Կոնֆլիկտ ընտանիքի այլ անդամների հետ:

Եթե համեմատենք ընդլայնված և բջջային ընտանիքները, ապա կտեսնենք, որ ընդլայնված ընտանիքներում առաջանում են այնպիսի կոնֆլիկտներ, որոնք ուղղակի չեն կարող առաջանալ բջջային ընտանիքներում: Հայկական իրականությունում ընդունված ավանդույթ է, երբ տղան ամուսնանում և իր կնոջ հետ ապրում է հայրական ընտանիքում, որտեղ, բացի ծնողներից, ապրում են նաև եղբայրները, քույրերը և այլ հարազատներ: Որքան բազ- 230 մանդամ է ընտանիքը, այնքան դժվար է ապահովել բարիդրացիական մթնոլորտ: Բազմաթիվ ընտանիքների ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ընդլայնված ընտանիքներում կոնֆլիկտը հիմնականում առաջանում է հարսների և սկեսուրների միջև:

Կոնֆլիկտների պատճառ կարող են հանդիսանալ կենցաղային պայմանները, ֆինանսական խնդիրները, կրթվածության մակարդակի տարբերությունները, մայրական խանդը, հարսի ինքնահաստատվելու ձգտումը, երեխայի դաստիարակության հետ կապված տարբեր մոտեցումները, բնավորության և խառնվածքի անհամատեղելիությունը և այլն: Կոնֆլիկտներ են առաջանում նաև ընտանիքի այլ անդամների միջև, երբ առաջ է գալիս նյութական բարեկեցության, ժառանգության հարցը: Առաջին հայացքից թվում է, թե այս տեսակի կոնֆլիկտներն ազդեցություն չունեն երեխայի հոգեկան զարգացման վրա, սակայն, երբ երեխան ականատես է լինում, թե ինչպես են ծնողները վիճաբանում, վիրավորում, վարկաբեկում մեկը մյուսին, փոխվում է նաև նրա հոգեվիճակը:

2.2 Ի՞նչ ազդեցություն է ունենում ընտանեկան կոնֆլիկտները երեխայի հոգեբանության ուսման որակի վրա

Ընտանիքում պարբերաբական բնույթ կրող վեճերի պատճառները կարող են լինել բազմազան՝ սեռական հարաբերություններում առկա խնդիրներ, չարդարացված սպասումներ, խուսափումը պատասխանատվությունից, սոցիալ- տնտեսական պայմաններ, դաստիարակության գործընթացի մեջ առկա ծայրահեղ մոտեցումներ և այլն։ Երբ ծնողները տվյալ հարցերը չեն կարողանում ժամանակին լուծել, իրավիճակը վեր է ածվում կոնֆլիկտային, կրկնվող փակ շղթայի, կարող են կիրառվել հոգեբանական և

ֆիզիկական բռնություն: Այս ամենը վկայում է մեծահասակների՝ կոնֆլիկտները գրագետ լուծելու հմտությունների պակասի մասին: Յուրաքանչյուր անձ՝ հատկապես անչափահասը, ապրելով այս միջավայրում, կարող է գերապրումներ ունենալ, տրավմատիկ կենսափորձ ձեռք բերել, ձևավորել անվստահություն աշխարհի հանդեպ, զոհի կամ ագրեսորի հոգեբանություն»:

Կոնֆլիկտային իրադրությունը երեխային դարձնում է սառնասիրտ, շփվող, դաժան, անուշադիր, ագրեսիվ, կոպիտ կամ էլ անվստահ, ինքնամփոփ, ընկճված ու անտարբեր: Ընդհանրացնելով կատարած աշխատանքը՝ մենք եկանք այն եզրակացության, որ ընտանիքի անառողջ մթնոլորտը, ամուսինների կոնֆլիկտային հարաբերությունները միանշանակ բացասական ազդեցություն են գործում երեխայի վրա:

Երեխան, որը մշտապես գտնվում է լարված, սթրեսային վիճակում, ունենում է ծանր բնավորություն, չի կարողանում կապեր հաստատել հասակակիցների և մեծահասակների հետ, ունենում է ոչ ադեկվատ, ցածր ինքնագնահատական:

Ցանկացած կոնֆլիկտ երեխան կարող է ընկալել որպես սիրո բացակայություն, անգամ օբյեկտիվ քննադատությունը կամ սխալ վարքագծի մատնանշումը՝ ուղղված իր հասցեին: Հետևաբար ծնողների վեճերը սիրո բացակայության, հուսահատության, անպաշտպանության, տագնապի զգացման հիմք կարող են հանդիսանալ: Երբեմն հայրն ու մայրն ուրիշների մոտ ձևացնում են՝ երջանիկ են և հաշտ, իսկ տանը լիովին հակառակ պատկերն է լինում: Ծնողների կողմից հարգանքի կամ սիրո ծայրահեղ տարբերվող ցուցադրությունների դեպքում երեխան ծնողներին վերագրում է անարդարության, ստախոսության հատկանիշներ և կասկածում է ծնողների՝ իր հանդեպ սիրուն, ազնվությանը, նվիրվածությանը, առաջանում է հիասթափություն, և աշխարհի հանդեպ ձևավորում է կասկածամիտ վերաբերմունք: Սա խաթարում է հարաբերությունների կառուցման հմտությունների ձևավորումը, կարող է առաջ բերել շեղվող վարքագիծ:

Իհարկե, հարաբերություններն առանց կոնֆլիկտի հնարավոր չեն: Խնդիրը կոնֆիկտների լուծման տարբերակների, հուզականության դրսևորումների չափի մեջ է: Սակայն կարող են պատահել նաև բուռն պոռթկումներ: Մարդիկ տարբեր են, խառնվածքներն ու արձագանքները՝ նույնպես: Կոնֆլիկտային իրադրության մեջ կարևոր է յուրաքանչյուրի դերը: Երեխաներն իրավունք ունեն արտահայտել իրենց կարծիքը և որոշակի դեր խաղալ խնդրի լուծման գործում: Դա կարող է լինել մեկ նախադասություն,

օրինակ՝ «ինձ դուր չի գալիս այս իրավիճակը» կամ «ես վատ եմ զգում, երբ ձեզ տեսնում եմ այսպիսին»։ Սա կարող է տանել լիցքաթափման, իրադրությանը գիտակցաբար մոտենալուն։ Պատահում է նաև, որ երեխաների կարծիքը անտեսվում է, ընտանիքի անդամները գտնվում են սուր կոնֆլիկտային իրադրության մեջ, և երեխային սթրեսից խուսափելու համար մնում է պարզապես հեռու կանգնել իրադրությունից։ Իհարկե, այս դեպքում էլ անտարբերություն է առաջանում։ Ելքը մեծահասակների գիտակցական մոտեցումն է։

Եզրակացություն

Այսպեսով, ամփոփելով վերը նշվածը , կարելի է ասել, որ ընտանիքը բաց համակարգ է որը կազմված է ենթահամակարգերից, և, որպես ենթահամակարգ, մտնում է այլ համակարգի (հասարակություն) կազմի մեջ։

Ցանկացած ընտանիքում վեճերն ու կոնֆլիկտներն անխուսափելի են, ուստի յուրաքանչյուր մեծահասակ ամուսնական զույգ պետք է սթափ գիտակցի, որ պատասխանատվություն է կրում ձևավորելու և դաստիարակելու առողջ երեխա: Այդ պատճառով ընտանիքում պետք է.

1. կոնֆլիկտների թիվը հասցնել նվազագույնի, իսկ առաջացման դեպքում դրանց արագ լուծում տալ,

2. ընտանիքում ստեղծել խաղաղ, հանգիստ մթնոլորտ երեխայի ֆիզիկական և հոգեկան զարգացման համար,

3. բարիդրացիական հարաբերություններ հաստատել ինչպես երեխայի, այնպես էլ ընտանիքի բոլոր անդամների հետ՝ հիմնված սիրո և հարգանքի վրա:

Ընտանիքի անդամները սովորաբար միմյանց հետ կապված են զգացմունքային կապերով, միմյանց նկատմամբ զգում են փոխադարձ պատասխանատվություն: Ընտանիքը նաև սոցիալական ինստիտուտ է, այսինքն՝ մարդկանց փոխհարաբերությունների կայուն ձևը, որի շրջանակներում իրականացվում է մարդկանց առօրյա կյանքի հիմնական մասը սեռական հարաբերություններ, մանկածնություն և երեխաների սկզբնական սոցիալականացում, կենցաղային խնամքի, կրթական և բժշկական սպասարկման նշանակալի մաս և այլն:

Ընտանիքի յուրահատկություններից մեկն այն է, որ մի քանի մարդ ամենասերտ փոխհարաբերությունների մեջ են լինում երկարատև ժամանակահատվածում, մի քանի տասնյակ տարիների ընթացքում: Ներընտանեկան անբարենպաստ փոխհարաբերությունների առաջացման հիմնական և ավելի հաճախ հանդիպող պատճառներից մեկը կոնֆլիկտներն են ընտանիքի անդամների միջև:

Գրականության ցանկ

1. Սեդրակյան Ս.Ա. Ընտանիքի հոգեբանություն. Երևան:Ուրարտու համալս., 2010, էջ 216-2018:

2. Նալչաջյան Ա. Ա. Անձ, Խմբային սոցիալականացում և հոգեբանական հարմարում.,Երևան,ՀՀ ԳԱԱ հրատ.,1968, էջ 132-135:

3. Նալչաջյան Ա. Ա. Ընտանիքի սոցիալական հոգեբանություն. ակնարկներ ծնողների և մանկավարժների համար,Երևան.,1992,էջ 231

4. Սեդրակյան Ս. Ա. Ընտանիքի հոգեբանության խնդիրներին դերային մոտեցման էությունը // Հոգեբանությունը և կյանքը, Երևան Զանգակ-97, 2010, էջ 9-23:

5. Սեդրակյան Ս. Ա. Ընտանիքի հոգեբանություն,Երևան Ուրարտու համալսարան,2010, էջ 465

Օգտագործված հղումներ

6. http://www.hogeban.info/17171717.php#tips

7. https://www.academia.edu/41914400/Ընտանեկան_կոնֆլիկտները_դրանց_ազդեցությունը_երեխաների_վրա_եւ_հնարավոր_լուծումները